ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

No 241/Ա-2 «10» 03 2017

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 21-Ի N 740-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 21-ի «Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2015-2016 ուսումնական տարվա դասագրքերի համար ներդրումայնի գումարների չափը հաստատելու մասին» թիվ 740-Ա/Ք հրամանի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3.Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի միջոցներով հրատարակված 10-րդ, 11-րդ և 12-րդ դասարանների դասագրքերի օգտագործման ժամկետը երկարացնել երկու տարով: Նշված դասարանների համար վերահրատարակված դասագրքերի օգտագործման ժամկետ սահմանել չորս տարի:»:

?????? ????????
Mar 9 2017 6:12 PM +04:00

/ ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ